ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

19 նոյեմբերի 2024 թվական

3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 16.15

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 17 անդամ՝

Սեդա Տեր-Մինասյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Գրիգոր Իսկանդարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Հայկ Միրզոյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Աննա Ավետիսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Իզաբելլա Աբգարյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Արշակ Սարգսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արմենակ Դանիելյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Գևորգ Ստեփանյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Իոսիֆ Կուբատյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Արմեն Քոչարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սամվել Հակոբյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Դիանա Քերոբյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,
Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

Առաջին հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Սեդա Տեր-Մինասյան, խնդրեմ:

Սեդա Տեր-Մինասյան

-Հարցս վերաբերում է սպորտի ոլորտին: Նշվեցին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում առկա խնդիրները, սակայն ես տեղյակ եմ, որ խնդիրներ առկա են նաև մյուս մարզական ֆեդերացիաներում:

Արդյոք կա համագործակցություն մարզական ֆեդերացիաների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հետ, որովհետև այդ ֆեդերացիաների աշխատանքի կամ «անգործության» արդյունքում մարզադպրոցները, որոնք հիմնականում քաղաքապետարանի հովանու տակ են և ֆինանսավորվում են քաղաքապետարանի կողմից, կարող են ուղղակի փակվել, քանի որ սպորտային աճ չկա:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ Արսեն Մակվեցյանը:

Արսեն Մակվեցյան

-Այո՛, իհարկե համագործակցում ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և ֆեդերացիաների հետ: Տեղյակ եմ ՀՀ գեղասահքի ֆեդերացիայում առկա խնդրի մասին՝ Հայաստանի առաջնությանը մասնակցելու համար երեխաներից, որպես մուտքավճար, 50.000 դրամ պահանջելու վերաբերյալ:

Այս հարցի շուրջ քննարկում է կայացել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանի մոտ, նաև քննարկում է տեղի ունեցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Կարեն Գիլոյանի հետ, բարձրացրել եմ դժգոհությունը և սպասում ենք նախարարության պատասխանին: Գրություն է ուղարկվել նաև Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե՝ պարզաբանում ստանալու նպատակով, թե ինչու՞ են Հայաստանի առաջնությանը մասնակցելու համար երեխաներից 50.000 դրամ պահանջում՝ այն դեպքում, որ Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոցը քաղաքապետարանը պատրաստ էր տրամադրել անվճար:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյան, խնդրեմ:

Գրիգոր Իսկանդարյան

-Առաջին հարցս հետևյալն է. փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը մի քանի անգամ հայտարարել է Երևանի ավտոբուսների փոխադրման ինքնարժեքի մասին՝ հնչեցնելով

գինը՝ 200-230 դրամ: Ես մի քանի անգամ՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր հարցում եմ կատարել, որպեսզի ինձ տրամադրվի այդ գումարի բացվածքը:

Այժմ կրկին խնդրում եմ տրամադրել այդ գումարի բացվածքը և նաև ուղևորափոխադրումների քանակը, որպեսզի մենք նույնպես հաշվենք ինքնարժեքը, նաև կարողանանք հասկանալ, թե ինչպես եք հաշվել և ստացել այդ գումարը:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Ձեր կողմից ուղևորափոխադրումների ինքնարժեքի վերաբերյալ հարցում չենք ստացել, հետևաբար չէի կարող պատասխանել չստացված հարցմանը: Բազմիցս ներկայացրել եմ ինքնարժեքի հաշվարկի մեթոդաբանությունը, նշելով, որ հաշվարկվել է ոչ թե ընթացիկ իրավիճակը պահպանելու, այլ ավտոբուսների նորմալ տեխսպասարկման, առանց երկարաժամկետ պարտավորություններ գոյացնելու աշխատանքի, գործող շարժակազմի՝ ներառյալ 171 ավտոբուսի հետգնման, հետագայում կրկին տրանսպորտային համակարգը վերականգնելիս ցիկլի մեջ չգցելու տրամաբանությամբ:

Բազմիցս նաև ասել եմ, թե Ձեր հաշվարկի մեթոդաբանության մեջ ինչն է սխալ, մասնավորապես այն, որ Դուք վերցնում եք անընդհատ այն սուբսիդիայի թիվը, որը ես հայտարարել եմ անցյալ տարի և ասել եմ, որ դա ընթացիկ վիճակը պահպանելու տրամաբանության մեջ է և պետք չէ այդ ելակետից հաշվարկ կատարել, սակայն Դուք հաշվարկել եք:

Գրիգոր Իսկանդարյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. շատ է խոսվում բակերի բարեկարգման մասին: Իմ տեղեկացմամբ հոկտեմբեր ամսին ոռոգման ջուրն անջատվում է, բայց կան շինարարական ընկերություններ, որ հոկտեմբեր ամսին դեռ նոր մրցույթ են շահում, որովհետև մրցույթը հայտարարվել է սեպտեմբերին: Մոտավորապես նոյեմբեր ամսին սկսում են աշխատանքները և նախագծով նախատեսված է կանաչապատում, որը պետք է ոռոգվի: Ստացվում է, որ շինարարից պահանջում ենք կանաչապատ տարածք, սակայն պարզապես դա հնարավոր չէ, որովհետև՝ նախ ոռոգման ջուր չկա և նաև մոտենում է ձմեռը:

Ի՞նչ տրամաբանությամբ է սեպտեմբեր ամսին հայտարարվում կանաչապատման համար մրցույթ, որը պետք է ավարտվի 3-4 ամիս հետո:

Նաև տեխհսկողության հետ կապված Դուք հանձնարարական էիք տվել, որ երկշաբաթյա ժամկետում Ձեզ տեղեկացնեն, թե ինչ է արվել: Խնդրում եմ այդ մասին ևս բարձրաձայնեք:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Ալբերտ Հովասափյանը:

Ալբերտ Հովասափյան

-Հարցը վերաբերում է Դավթաշեն 4-րդ թաղամասի բարեկարգված բակին, այդտեղ եզրաքար չի փոխվել, պետք է նախագիծը նայեք: Հող է լցվել, որը նստել է, նախագծով եզրաքարերի փոխարինում նախատեսված չի եղել:

Տիգրան Ավինյան

- Ավագանու հաջորդ նիստին կքննարկվի տեխիսկողության հետ կապված խնդրի լուծման ձևը:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է անձի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման գործընթացին: Ցանկանում եմ իմանալ ինչպե՞ս է տեղի ունենում այդ գործընթացը. հարազատը դիմում է ներկայացնում, որ տվյալ հասցեում տեղադրվի իր հայրիկի կամ մայրիկի հուշատախտակը:

Կխնդրեի այս հարցին պատասխանել, այնուհետև կասեմ, թե որն է հարցիս պատճառը:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, խնդրեմ:

Արմինե Վարդանյան

-Պարոն Ծովյան, ցանկանում եմ տեղեկացնել, որ հուշատախտակի տեղադրման համար պարտադիր չէ, որ դիմեն տվյալ անձի հարազատները, օրինակ, եթե անձը նկարիչ է, միջնորդող կողմը կարող է լինել Հայաստանի նկարիչների միությունը, կոմպոզիտոր է՝ Հայաստանի կոմպոզիտորների միությունը և, բնականաբար, նաև կարող է միջնորդել ընտանիքի անդամը: Հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման ընթացակարգը հետևյալն է. հուշատախտակի տեղադրման թույլտվություն տրամադրելու խնդրանքով քաղաքապետին ուղղված դիմումին կից պետք է ներկայացվի տվյալ անձի կենսագրությունը, տեղեկանք համատիրությունից, ինչը կփաստի այն, որ տվյալ անձը որոշակի ժամանակահատվածում բնակվել է այդ շենքում, այն հատվածի լուսանկարը, որտեղ պետք է փակցվի հուշատախտակը, հուշատախտակի էսքիզը՝ սահմանված չափսերին համապատասխան:

Այս ամբողջ փաթեթը քաղաքապետի հանձնարարականով մակագրվում է կազմակերպական վարչությանը, որից հետո տրամադրվում է Երևանի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ալեքսանդր Բադալյանին՝ էսքիզի չափսերի և ճարտարապետական տեսքի քննարկման համար: Պարոն Բադալյանի դրական կարծիքի դեպքում հուշատախատակի փաթեթը

տրամադրվում է Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քննարկմանը:

Հանձնաժողովի նախնական դրական կարծիքից հետո պատրաստվում է Երևանի ավագանու որոշման նախագիծ:

Ռոբերտ Ծովյան

-Ցանկանում եմ նշել հարցիս պատճառը. Որոշ ժամանակ առաջ Երևանի ավագանու նիստում տրվել է համաձայնություն մի մարդու հուշատախտակի տեղադրման համար: Ավագանու նիստի ավարտին ինձ հեռախոսազանգով տեղեկացրեցին, որ այդ անձի նկատմամբ հարուցված է քրեական գործ: Այսինքն՝ տվյալ մարդու անունը «ԴատաԼեքս»-ի որոնողական համակարգում գրելով, պարզ է դառնում, որ տվյալ անձի նկատմամբ հարուցված է քրեական գործ և այդ մարդը մեղադրյալ է, իհարկե հաշվի առնելով անմեղության կանխավարկածը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ծովյան ցանկանում եմ տեղեկացնել, որ հուշատախտակի տեղադրման համար կարևոր նախապայման է, որ տվյալ անձը պետք է լինի մահացած: Այսինքն խոսքը վերաբերում է մահացած մարդու նկատմամբ հարուցված քրեական գործի՞ն:

Ռոբերտ Ծովյան

-Ինձ տեղեկացրեցին, որ այդ մարդը Հայաստանում չի մահացել, նույնիսկ կասկածներ կա արդյոք այդ մարդը մահացել է, թե ոչ:

Երկրորդ հարցս վերաբերում է Երևանի քաղաքապետարանի և Ձեր կողմից ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին:

Ցանկանում եմ իմանալ այս մեկ տարվա ընթացքում այդ ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են իրականացվել, որովհետև թե՛ լրատվամիջոցների, թե՛ Երևանի ավագանիների կողմից կոռուպցիայի բացահայտման շատ դեպքեր են եղել, ինչպես նաև հակակոռուպցիոն կոմիտեի կողմից՝ կապված վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի գործունեության վերաբերյալ: Օրինակ, երբ ուսումնասիրում էի թվով 10 բակի բարեկարգման ծրագրերը, նկատեցի, որ բոլոր տեղերում բետոնի 1 խմ-ի արժեքը 45.000-50.000 դրամ է: Նշեմ, որ ես մեկ ամիս առաջ այդ նույն բետոնը գնել եմ 30.000 դրամով: Կարող եմ հասկանալ, թե ո՞րն է պատճառը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ծովյան, Դուք շատ կարևոր նշում կատարեցիք, որ վերջերս Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում բացահայտվում են կոռուպցիայի շատ դեպքեր: Գիտե՞ք ինչու է բացահատվում այդ դեպքերը, սա չի նշանակում, որ նախկինում կոռուպցիոն դեպքեր շատ քիչ են եղել: Նախկինում միգուցե այլ մոտեցումներ են եղել և ցանկանում եմ տեղեկացնել, որ վերջին շրջանում Երևանի քաղաքապետարանը սերտորեն աշխատել է իրավապահ համակարգի գործընկերների հետ: Արձանագրված բոլոր ակնհայտ կոռուպցիոն դեպքերով

իրականացվել են համապատասխան քննություններ: Նշեմ ավելին՝ բոլոր այն դեպքերում, որտեղ կանխարգելման գործիքակազմը չի աշխատել, մեր գործընկերների հետ համատեղ աշխատանքներ ենք իրականացնել:

Ցանկանում եմ նաև նշել, որ կոռուպցիոն դեպքերի բացահայտումների շատ լինելը չի նշանակում, որ կոռուպցիան է շատացել: Ես վստահ եմ, որ կոռուպցիոն դեպքերը նախկինից քանակապես շատ ավելի քիչ է: Մենք հիմա պայքարում ենք կոռուպցիոն վերջին՝ ոչ համակարգային դեպքերի դեմ, այսինքն՝ այն դեպքերի, որտեղ ընդհանուր առմամբ չկա բուրգ, այլ մի քանի «արկածախնդիր մարդիկ» են, ովքեր որոշել են, որ կարող են իրենց դիրքը չարաշահել և որևէ կոռուպցիոն գործարքի մեջ ներգրավվել:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից մատնանշված խնդրին՝ շատ դեպքերում, երբ փաթեթով որևէ տեսակի աշխատանքների մրցույթ է իրականացվում, մրցութային գինը սահմանվում է ընդհանուր աշխատանքի համար: Պետք է նաև տեղեկացնեմ, որ այս տարի քաղաքապետարանի կողմից, ստանդարտների մասով, որոշակի փոփոխություններ է իրականացվել, այսինքն՝ որոշակի ստանդարտներ ենք պահանջում, օրինակ՝ տոմետի հետ կապված: Այսինքն մեր համար կարևոր է, որ այն արժեքով, որ մենք գնում են իրականացնում, որակը համապատասխանի սահմանված գնին, բայց այդ միջակայքում, ով ինչ գին կգրի դա երկրորդային է:

Ռոբերտ Ծովյան

-Պարոն Ավինյան, այսինքն, համագործակցելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հետ, բացահայտել եք կոռուպցիոն դեպքերը:

Տիգրան Ավինյան

-Ոչ միայն ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հետ ենք համագործակցում:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

Հայկ Միրզոյան

-Առաջին հարցս վերաբերում է կոյուղատար համակարգին: Ինչպես գիտենք կոյուղատար համակարգի սպասարկման պատասխանատուն «Վեոլիա ջուր» ընկերությունն է, բայց քաղաքի տարբեր հատվածներում՝ մասնավորապես բակային տարածքներում, նկատում ենք դիտահորերի իջեցում, ընդհուպ մինչև փլուզումների առաջացումով: Այս ուղղությամբ քաղաքապետարանը որևէ աշխատանք կատարում է, թե՞ ոչ:

Երկրորդ հարցս վերաբերում է մշակութային կյանքին: Կարող ենք արձանագրել, որ էապես աշխուժացել է Երևանի մշակութային կյանքը՝ հատկապես համաքաղաքային տարբեր միջոցառումներով, սակայն կուզենայի իմանալ, թե քաղաքապետարանի ենթակայության մշակութային կրթօջախներում ի՞նչ կոնցեպտով են մշակվում ուսումնական ծրագրերը, ինչպե՞ս են դրանք իրականացվում և որակի հսկողության ի՞նչ մեխանիզմներ են գործում:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

Արսեն Կարոյան

-Ուզում եմ շեշտել, որ միայն այս տարվա ընթացքում 27 հասցեներում կոմունալ տնտեսության վարչության կողմից իրականացվում են կոյուղատար համակարգի փոխարինման աշխատանքներ՝ ամենախոցելի հասցեներում: Բացի գլոբալ խնդիրներից, եթե լինում են այլ խնդիրներ, մենք և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերն ահազանգում ենք «Վեոլիա ջուր» ընկերություն՝ տեղային լուծումներ են գտնում և աշխատանքներ իրականացնում:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

Գոշ Սարգսյան

-Երևանի ենթակայության արտադպրոցական հիմնարկներում հիմնականում աշխատում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրված օրինակելի ուսումնական պլանների հիման վրա:

Որակի հետ կապված տեղեկացնեմ, որ մենք տարվա մեջ երկու անգամ իրականացնում ենք կրթության որակի ուսումնասիրություն ուսումնական գործընթացներում և ուսումնասիրության հիմնարար միջոցներից մեկը դա երաժշտական և արվեստի դպրոցների կողմից անցկացվող ամենամյա մրցույթ-փառատոնն է:

Այս պահին քննարկվում է լայնածավալ ծրագիր, որը կոչվում է «Երաժշտական կանչ» և առաջին անգամ ներդրվելու է 2025թ. հունվար-դեկտեմբեր ամիսների համար, ինչպես նաև ուղիղ առնչություն է ունենալու մանկապարտեզների ավագ խմբերի և հանրակրթական դպրոցների առաջին դասարանցիների համար:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

-Առաջին հարցը հնչեցնեմ. բնակիչները հետաքրքրվում են նոր նախագծվող տրանսպորտային ցանցով Ավան վարչական շրջանից դեպի Հարավ-Արևմտյան թաղամաս ուղիղ տրանսպորտ նախատեսվում է, թե՞ ոչ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Սուքիասյան, այս հարցին պատասխան կտրամադրվի գրավոր:

Այնուամենայնիվ, չմոռանանք, որ տրանսպորտային համակարգի փոփոխությունը և տոմսային համակարգը մեզ հնարավորություն է տալու տեղափոխությունն իրականացնել առանց հավելյալ գին վճարելու:

Մանուկ Սուքիասյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Վարդավառի այգուն, որն ըստ արժանվույն խնամքի չի արժանացել: Եղել են որոշակի խնդիրներ, մամուլում անդրադարձ է եղել դրա վերաբերյալ, բայց այս պահին Վարդավառի այգին և հարակից լիճն ուշադրության կարիք ունեն: Այդ պուրակը կարող է դառնալ երևանցիների համար ներառական ժամանցի վայր: Կուզենայի իմանալ ի՞նչ ծրագրեր կան այդ ուղղությամբ:

Տիգրան Ավինյան

-Ես համաձայն եմ Ձեզ հետ, Վարդավառի այգին ունի պոտենցիալ՝ դառնալու ավելի մասսայական և մարդկանց համար ավելի հաճելի վայր: Այգին ունի վարձակալ ու բավականին երկարաժամկետ պայմանագիր, բայց այդ այգին ևս գտնվում է այն այգիների ցանկում, որտեղ անհրաժեշտություն կա բանակցությունների՝ պայմանները վերանայելու և լուծումներ գտնելու համար:

Պարզաբանումներ կներկայացնի նաև Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանը:

Հակոբ Բալայան

-Տեղեկացնեմ, որ այգին 99 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրվել է 2003թ. և այս պահին հարուցված է քրեական գործ, որն ընթացքի մեջ է: Մինչև քրեական գործի ավարտն այնտեղ որևէ գործողություն իրականացնել չենք կարող:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Աննա Ավետիսյան, խնդրեմ:

Աննա Ավետիսյան

-Պարոն Ավինյան, առաջին հարցով ցանկանում եմ անդրադառնալ Ձեր կողմից տրված խոստումներին և հանձնարարականներին, որոնք դեռ չեն կատարվել:

Առաջինը՝ Վարդաշենի 6-րդ փողոցի վթարային շենքներն են, որտեղ 2023թ. նախընտրական շրջանում հանդիպման ժամանակ Դուք խոստացել եք, որ 1,5 տարվա ընթացքում անմարդկային պայմաններում ապրող բնակիչներին տարհանելու ու վերաբնակեցնելու եք նոր տներում, սակայն այդ ժամանակահատվածից 1 տարուց ավել է անցել և նրանց հետ ոչ ոք այս ընթացքում չի հանդիպել և այս հարցով ոչ մի շարժ տեղի չի ունենում: Այս հարցի շրջանակում ուզում եմ անդրադառնալ նաև պարոն Փամբուխչյանին, ցանկանում եմ իմանալ ինքը երբևէ գնացե՞լ է, տեսե՞լ է, թե այդ մարդիկ ինչպիսի պայմաններում են ապրում: Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունը մի քանի ավագանու անդամներով եղել է տեղում և տեսել, որ օրինակ այդ մարդկանց առաջին հարկի բնակարաններում՝ կոնկրետ ամբողջ տան մեջ, կոյուղաջրեր են: Այդ մարդիկ այժմ ստիպված բնակվում են վարձակալած բնակարաններում: Վերևի հարկի բնակարաններում տանիքից ամբողջությամբ ջուրը հոսում է, պատշգամբները փլուզվել են: Ցանկանում եմ իմանալ, Դուք արդյոք մտածում եք այդ մարդկանց մասին:

Երկրորդ հարցս Նորք-Մարաշ վարչական շրջանում գտնվող «Թիվ 121 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերաբերյալ է: Նախորդ նիստի ժամանակ այս մասին բարձրաձայնել եմ, անցել է մեկ ամսից ավել, ինձ հետաքրքիր է ի՞նչ է տեղի ունեցել այս ընթացքում: Մանկապարտեզի շենքի մի մասը տևական ժամանակ տրված էր սոցիալական ծառայությանը, սակայն 4 տարուց ավելի մանկապարտեզը չի գործում, այն դեպքում, երբ 32 երեխա հերթի մեջ սպասում են և չեն կարողանում այցելել մանկապարտեզ:

Տիգրան Ավինյան

-Վարդաշեն թաղամասի բնակիչների խնդիրների մասով ցանկանում եմ տեղեկացնել, որ ես 2 անգամ այցելել եմ այդ թաղամաս և տեղյակ եմ, թե այնտեղի բնակիչներն ինչպիսի պայմաններում են ապրում և լավ հիշում եմ, թե իրենց ինչ եմ խոստացել: Այնտեղ կա 2 վթարային շենք և հոսող հողեր, որի պատճառով փաստացի ներդրումային ծրագրերով չենք կարողանում իրականացնել որևէ նախագիծ:

Վարդաշենի բնակիչների տեղափոխության հարցով քաղաքապետարանին անհրաժեշտ է ՀՀ կառավարության աջակցությունը, որի մասին պարզաբանումներ կներկայացնի պարոն Փամբուխչյանը, բայց ցանկանում եմ, տեղեկացնել, որ հարցի լուծման համար անհրաժեշտ է 3.5 մլդ դրամ: Պետք է նաև նշեմ, որ պարոն Փամբուխչյանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, պարբերաբար հանդիպում են Վարդաշեն թաղամասի բնակիչների հետ և ներկայացնում են իրավիճակը, թե որ փուլում է գտնվում:

Պարոն Փամբուխչյան, խնդրեմ:

Արմեն Փամբուխչյան

-Տիկին Ավետիսյան, ցանկանում եմ տեղեկացնել, որ վերջին անգամ Վարդաշեն թաղամասի բնակիչների հետ հանդիպել եմ 2 շաբաթ առաջ Երևանի քաղաքապետարանում: Ես իրենց տեղեկացրել եմ, որ ներկայումս Երևանի քաղաքապետարանը միայն իր լծակներով չի կարող իրականացնել այդ ամբողջ ծավալի գործընթացը: Ներկայումս ՀՀ կառավարության հետ քննարկումներ են իրականացվում, որպեսզի հասկանանք, թե ինչպիսի միջոցներով հնարավոր կլինի լուծել բնակիչների խնդիրները:

Նշեմ նաև՝ այդ տարածքում քաղաքապետարանի կողմից դիտարկվում է ներդրումային ծրագրով կիրառել ռենովիացիայի ինչ-որ մի փորձ: Պետք է նշեմ, որ այդ տարածքը բիզնեսի համար ոչ նպատակահարմար է, որպեսզի անձը կարողանա որոշակի ներդրումներ իրականացնի և դրա փոխարեն տվյալ բնակիչներին այլ բնակարաններ հատկացնի կամ տեղում շենք կառուցի: Սա մի փոքր բարդ գործընթաց է, բայց չի վրիպել մեր ուշադրությունից և մենք շարունակում ենք պահել այս հարցը մեր ուշադրության կենտրոնում:

Տիգրան Ավինյան

-Նորք-Մարաշ վարչական շրջանում գտնվող «Թիվ 121 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հարցի հետ կապված պարզաբանում կներկայացնի նաև Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար Միքայել Օհանյանը, խնդրեմ:

Միքայել Օհանյան

-Հարգելի պարոն քաղաքապետ, նախորդ նիստի ժամանակ ես նշել եմ, որ մանկապարտեզի այդ տարածքը վարձակալությամբ տրամադրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որի կողմից իրականացվում է միջազգային ծրագիր: Հետևաբար այդ պայմանագիրը խզել այժմ հնարավոր չէ:

Ինչ վերաբերվում է երեխաներին մանկապարտեզներ տեղավորելու հարցին՝ այս հարցը քննարկել ենք քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի հետ, որի արդյունքում նոր խումբ ստեղծելու նպատակ կա:

Տիգրան Ավինյան

-Տիկին Խաչատրյան, ներկայացրեք, թե քանի՞ երեխա է հերթագրված այդ մանակապարտեզում:

Մարգարիտ Խաչատրյան

-Պարոն Ավինյան, Նորք-Մարաշ վարչական շրջանում կա թվով 4 մանկապարտեզ և անշուշտ, հերթագրումներն ավելին են, քան կարողանում ենք սպասարկել:

Տիգրան Ավինյան

-Պետք է նշեմ, որ տիկին Ավետիսյանը փաստացի ճիշտ հարց է բարձրաձայնում: Եթե այդ տարածքը չի օգտագործվում, պետք է հասկանալ ինչպես պետք է վերաձևակերպել պայմանագիրը:

Պարոն Հովհաննիսյան, խնդրում եմ այս հարցի շուրջ խոսել գործընկերների հետ, վերաձևակերպենք պայմանագիրը և երբ հաջորդ նիստին տիկին Ավետիսյանը բարձրաձայնի այս հարցը, նրան այս մասով տեղեկատվություն տրամադրենք:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Իզաբելլա Աբգարյան, խնդրեմ:

Իզաբելլա Աբգարյան

-Առաջին հարցը հնչեցնեմ. Արաբկիր վարչական շրջանը տևական ժամանակ է չունի ղեկավար: Գիտենք, որ վարչական շրջանի ամբողջ ղեկավար կազմը գրեթե «գլխատվել» էր: Եթե անհրաժեշտություն չկա ունենալու նման հաստիքներ, առանց վարչական շրջանի ղեկավարի և տեղակալների հնարավոր է ամիսներ շարունակ լավ կառավարել, գուցե օպտիմալացնե՞նք այդ հաստիքները բոլոր վարչական շրջաններում: Ուզում եմ հասկանալ ե՞րբ է նշանակվելու վարչական շրջանի ղեկավար:

Երկրորդ հարցը վերաբերում է վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի՝ քաղաքացիների հետ շփմանը: Աբովյան փողոցի հ.37 շենքի

բնակիչներն ահազանգել են, որ բարեկարգման արդյունքում կա անորակ հատված՝ եզրաքարը սուր է և երեք մեքենա, մեկ շաբաթվա ընթացքում, վնասել էր հետևի անվադողը:

Թվում էր, թե փոքր խնդիր է և կարելի էր արագ կարգավորել, փոխարենը բնակչին սկզբում ասել են, որ գտնեն կապալառուին՝ շինարարին, որն արդեն ավարտել էր աշխատանքը: Բնակիչը չպետք է գտնի կապալառուին, դա բնակչի գործը չէ և Դուք միջնորդն եք բնակչի ու շինարարի միջև:

Այնուհետև քաղաքացուն ասել են, թե կնոջ հետ շինարարական ինչ աշխատանքներ քննարկենք: Ուզում եմ հասկանալ ի՞նչ «քարանձավային» բարքեր են Կենտրոն վարչական շրջանում, որ նման բան կարող են ասել քաղաքացուն և եթե կան աշխատողներ, ովքեր պատրաստ չեն կանանց հետ քննարկել վարչական շրջանին վերաբերող հարցեր, ապա թող իմանան, որ քննարկելու են ավագանու կին անդամների հետ և շատ ավելի կոշտ:

Տիգրան Ավինյան

- Առաջին հարցի վերաբերյալ տեղեկացնեմ, որ այո՛, Արաբկիր վարչական շրջանն իրականացնում է ընթացիկ ծրագրերի կառավարումը, բայց նաև ուզում եմ իմանաք, որ Երևանի քաղաքապետարանն ինտենսիվ աջակցում է Արաբկիր վարչական շրջանին այդ գործընթացներում և վարչական շրջանի ղեկավարի պարտականությունները կատարում է Սուրեն Վարոսյանը:

Երկրորդ հարցի վերաբերյալ ներկայացնեմ սկզբունքային դիրքորոշում: Եթե իրապես նման դեպք է տեղի ունեցել, պարոն Պետոյան, ես ակնկալում եմ, որ պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկվեն և աշխատակիցը պետք է ազատվի աշխատանքից:

Պարզաբանում կներկայացնի նաև Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը:

Պետրոս Պետոյան

-Տիկին Աբգարյան, Ձեզ հասած տեղեկատվությունը խեղաթյուրված է: Խոսքը վերաբերում է Աբովյան փողոցի եզրաքարին՝ մոտավորապես մեկ շաբաթվա ընթացքում այդ հարցը լուծվել է: Նամակագրությանը նույնպես տեղյակ եմ, կարծում եմ ուռճացված եք ներկայացնում և իրականությանը չեն համապատասխանում: Սակայն առանձին կուսումնասիրենք:

Տիգրան Ավինյան

-Պարոն Պետոյան, ճշտեք աշխատակցի խոսքի բովանդակությունը և եթե հաստատվի, ապա ձեռնարկեք համապատասխան միջոցներ:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արշակ Սարգսյան, խնդրեմ:

Արշակ Սարգսյան

-Երևանում աղբահանությունը շատ վատ վիճակում է և բնությանն անդառնալի վնասներ է հասցնում: Երևանում մինչ օրս բացակայում է աղբի ժամանակակից

կառավարումը, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների պարտադիր և պարբերական իրականացումը: Այդպես էլ չնվազեցին և չչեզոքացան մարդու առողջությանն ու շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործությունը: 2024թ. բյուջեով նախատեսված ծախսը 5 մլրդ է, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 1.7 մլրդ-ով: Փորձում եք բյուջեի օպտիմալ կառավարումն ապահովել, սակայն ձախողում եք: Ինչպե՞ս է ստացվում 100 տոկոս աղբահանություն չեք կարող ապահովել, բայց փոխարենը 100 տոկոս վճարում եք պահանջում թերի կատարված ծառայության դիմաց:

Արդեն մի քանի ամիս է անցել Ձեր քննարկումներից՝ ի վերջո ի՞նչ որոշեցիք՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը հանձնելու եք մասնավոր ընկերության և ե՞րբ:

Անդրադառնամ նաև շինարարական աղբի տեղափոխման ծառայությանը, որի համար 2024թ. բյուջեով նախատեսել եք մոտ 231.5 մլն դրամ, սակայն փողոցներում լքված շինարարական աղբի տեղատարափ է:

23.07.2024թ. Երևանի քաղաքապետի կարգադրության համաձայն «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում անցկացվել է աուդիտ: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության իշխանությունն արդյունքներից գո՞հ է, եթե այո, ապա աղբահանությունն ինչու՞ է ձախողված, իսկ եթե ոչ, ապա ներկայացրեք աղբի ժամանակակից կառավարման Ձեր տեսլականը՝ հստակ ժամկետներով և գործիքակազմով: Հավելեմ նաև, որ աուդիտի տվյալներն ինձ այդպես էլ չտրամադրվեցին, որը տալիս է ինձ հիմնավոր պատճառ կատարելու հետևություններ՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից ոչ ճիշտ աշխատանքների կառավարում, գումարների մսխում, չարաշահումներ, նույնիսկ կոռուպցիա:

Երկրորդ հարցը վերաբերում է տրանսպորտին, մասնավորապես՝ օրական փաթեթին, որով նախատեսվում է 8 ուղևորափոխադրում՝ 900 դրամ արժողությամբ: Դուք քանի՞ ուղևոր եք ճանաչում, ով օրվա մեջ 8 անգամ օգտվում է տրանսպորտից:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցին անդրադառնամ. մեկ օրվա ուղևորափոխադրման փաթեթը ոչ հաճախ օգտագործվողն է լինելու: Այդ փաթեթի ամբողջ տրամաբանությունն այն է, որ հաշվարկվել է օրվա ընթացքում առավելագույն ուղևորափոխադրումների քանակը, որպեսզի որևէ մեկը, օրինակ՝ զբոսաշրջիկը, անհրաժեշտության դեպքում կարողանա օգտվել այդ փաթեթից:

Առաջին հարցի վերաբերյալ դիտարկում կներկայացնի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը, այնուհետև հարցին կպատասխանի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանը:

Արմեն Փամբուխչյան

-Շինաղբի հետ կապված՝ համաձայն եմ Ձեզ հետ, պարոն Սարգսյան: Տվյալ կազմակերպության հետ երբեմն ունենում ենք խնդիրներ: Հաջորդ տարի լրանում է կնքված պայմանագրի ժամկետը: Քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումները պարբերաբար կատարում են ստուգայցեր և եթե նկատում են աղբամանների հարակից տարածքներում թափված շինաղբ, տեղեկացնում են տվյալ կազմակերպությանը և կազմակերպում են աղբահանության աշխատանքները:

Բարձրաձայնված մյուս խնդիրների վերաբերյալ ուզում եմ տեղեկացնել, որ միայն այս տարի 20-ից ավելի տեխնիկա է գնվել: Մյուս տարվա համար նույնպես նախատեսում ենք տեխնիկայի ձեռքբերում, նաև անձնակազմի համալրում, որպեսզի կարողանանք պատշաճ մատուցել ծառայություն:

Սաշա Կատվալյան

-Տեղեկացնում եմ Ձեզ, որ այս պահին իրականացրել ենք գնում մեքենաների վրա վերահսկման երկու համակարգի ներդրման համար և դա կապվելու է GIS համակարգին, օնլայն ռեժիմով ունենալու ենք, թե մայրաքաղաքի որ հասցեում է իրականացվելու աղբահանությունը, որտեղ է մեքենան կանգ առնում: Դրա արդյունքում մենք կունենանք օնլայն մոնիտորինգ, թե օրինակ՝ եթե մի փողոցում դրված է 5 աղբաման, դրանք բավարար են աղբահանության իրականացման համար, թե ոչ, որովհետև այս պահին մենք այդ գործիքը չունենք: Այն փորձարկել ենք 2 մեքենայի վրա և արդյունավետ է: Ամբողջ քանակն ունենալու դեպքում ընդհանուր աղբահանությունը պատշաճ կիրականացվի:

Նշեմ նաև, որ մեքենաների քանակն այս պահի դրությամբ բավարար է և որևէ խնդիր չկա: Լինում են դեպքեր, երբ աղբամանները լցված են լինում, դա պայմանավորված է մի քանի հանգամանքով՝ որոշ վարորդներ մեքենաները կայանում են աղբամանների դիմացի հատվածներում և մինչև դիմում ենք ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությանը՝ ավտոմեքենաները հեռացնելու համար, բնականաբար այդտեղ պատկերը վատ է լինում:

Տիգրան Ավինյան

-«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում անցկացված աուդիտի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը:

Վիլեն Արևշատյան

-Աուդիտի հատուկ կարծիքը, դա գաղտնի փաստաթուղթ է, որը տրամադրվում է միայն գործադիր մարմնի ղեկավարությանը, իսկ ընդհանուր առմամբ աուդիտի եզրակացությունը կտրամադրվի պարոն Սարգսյանին:

Տիգրան Ավինյան

- Աղբահանության մասով 2024թ. բյուջեով նախատեսված գումարները 2023թ. համեմատ կրճատելու վերաբերյալ տեղեկացնեմ, որ իրականում բյուջեն չի կրճատվել, այլ

վերաբաշխվել է և տրվել վարչական շրջաններին՝ բակային հատվածներում աշխատանքներն իրականացնելու նպատակով համապատասխան աշխատակիցներ ավելացնելու համար: Այսինքն՝ գործառույթը և գումարը միասին փոխանցվել են վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերին:

Այն հարցին, թե Երևանում աղբահանություն իրականացնելու համար մասնավոր ընկերություն դիտարկելու ենք, թե ոչ, ապա տեղեկացնեմ, որ առաջին հերթին պետք է հասկանանք՝ Երևանի քաղաքապետարանն արդյոք ամեն ինչ անում է, որպեսզի արդյունավետ հավաքագրի աղբահանության եկամուտները և արդյոք Երևանի քաղաքապետարանն այդ եկամուտները հավաքագրելու դեպքում կարող է ավելացնել ծախսերը:

Երևանի քաղաքապետարանն ամեն ինչ չի անում, որպեսզի աղբահանության վճարները ճիշտ և քաղաքին համապատասխան հավաքագրի: Ծախսերը գերազանցում են հավաքագրված գումարների չափը: Համապատասխան վերլուծություններ կատարելուց հետո, եթե կրկին կլինեն դժգոհություններ, այդ ժամանակ Ձեր բարձրացրած հարցը կդիտարկենք:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմենակ Դանիելյան, խնդրեմ:

Արմենակ Դանիելյան

-Առաջին հարցը վերաբերում է Աջափնյակ վարչական շրջանի Գևորգ Չաուշի անվան հ.188 դպրոցին, որը գտնվում է անբարեկարգ, աղետալի վիճակում: Դպրոցը չունի կոյուղի: Տեղում ուսումնասիրել ենք, դպրոցի նկուղից մինչև տանիք խնդիրներ կան: Ե՛վ դպրոցի կոյուղաջրերն են լցվում նկուղ, և՛ հարակից շենքերի կոյուղաջրերը: Ժամանակ առ ժամանակ կոյուղաջուրը բարձրանում է, դիտահորից դուրս է գալիս ու լցվում բակ: Տնօրինությունը ստիպված տեղեկացնում է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմին, ձեռնարկվում են միջոցներ տարածքը մաքրելու ուղղությամբ, որպեսզի կարողանան դասապրոցեսը շարունակել: Դպրոցի թե՛ միջանցքներից, թե՛ դասասենյակներից ահավոր հոտ է գալիս, պատերը ճաքած են ու ծեփերը թափված, տանիքը պոլիէթիլենային տոպրակով է պատված, որպեսզի ջուրը չլցվի դպրոց: Եղել է 2-3 դեպք, որ անձրևի ժամանակ դասապրոցեսը դադարեցվել է: Սանիտարահիգիենիկ վիճակն ահավոր է և շտապ լուծում տալու անհրաժեշտություն կա:

ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 13-ի հ.805-Ն որոշմամբ Գևորգ Չաուշի անվան հ.188 դպրոցը և այլ դպրոցներ ներառված են եղել հիմնանորոգման ենթակա դպրոցների ցանկում, բայց 2018թ. հետո այդ դպրոցը դուրս է մնացել ցանկից:

Արդյոք պատրաստվում եք 2025թ. բյուջեով կամ ՀՀ կառավարության միջոցներով վերանորոգել կամ հիմնանորոգել այդ դպրոցը: Դպրոցը փոքր չէ, այնտեղ սովորում և աշխատում են 950 աշակերտ և 80-ից ավել աշխատակից:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Տեղյակ ենք Գևորգ Չաուշի անվան հ.188 դպրոցի խնդիրներին: Ընդհանուր առմամբ ուզում եմ ասել, որ դպրոցի շենքը, գույքը պատկանում է Պետական գույքի կառավարման կոմիտեին և կառավարվում է նրանց կողմից, իսկ ծրագրերն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

Համայնքը, որպես կառավարիչ, ունի որոշակի լիազորություններ և պարբերաբար դպրոցների մասով ներկայացնում ենք տեխնիկական իրավիճակը, դժգոհությունները: Մասնավորապես այս դպրոցի հետ կապված, գրությամբ առաջարկել ենք դպրոցն ընդգրկել վերակառուցվող վերանորոգվող դպրոցների ցանկում, բայց քանի որ այդ ցանկը որոշակի առումով սահմանափակված է և պետությունը չի կարող միանգամից բոլոր դպրոցներն ընդգրկել, այդ ցանկում ընդգրկված չէ այս դպրոցը:

Այս դպրոցի տանիքի խնդիրների լուծման հարցով դիմել ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, հաշվի առնելով, որ նախարարությունն ունի հրատապ աշխատանքներին լուծումներ տալու նոր ծրագիր: Ի ուրախություն բոլորիս մեզ տեղեկացրեցին, որ վերջերս տանիքը վերանորոգվել է, բայց մյուս խնդիրները դեռ շարունակում են մնալ և այս մասով ևս նախարարության հետ կշարունակենք աշխատել: Դպրոցն ունի ամբողջական նորոգման կարիք և առաջարկելու ենք այն ընդգրկել առաջիկա ծրագրերի շրջանակներում հիմնանորոգման ենթակա դպրոցների ցանկում:

Արմենակ Դանիելյան

-Երկրորդ հարցը վերաբերում է տրանսպորտի բարեփոխումներին: Կանգառներում չկան կանգառասրահներ, իսկ եղած կանգառասրահներում բացակայում են տեխնիկական միջոցներ, որով մարդիկ կարող են տեսնել, թե իրենց անհրաժեշտ տրանսպորտը երբ է մոտենալու:

Աջափնյակ վարչական շրջանում՝ որոշ տեղերում կան կանգառի գծանշումներ, սակայն կանգառասրահ չկա, իսկ որոշ տեղերում նույնիսկ գծանշում չկա: Այդ հատվածներում ավտոբուսները կանգառ կատարում են վարորդի հայեցողությամբ: Նորաշեն թաղամասի բնակիչները բողոքում են, որ վարորդները կանգառ են կատարում Աշտարակ գնացող ճանապարհին և նրանք ստիպված որոշ ճանապարհ հետ են գալիս: Հիմնականում բողոքում են 7 համարի ավտոբուսից: Կա նաև այլ բողոք 7 համարի ավտոբուսի վերաբերյալ, որ դրանք աշխատում են 30-40 րոպե միջակայքերով:

Հարցս հետևյալն է՝ արդյոք կարգավորվելու է այդ հարցը, թե ոչ և ե՞րբ է կարգավորվելու, ինչպես նաև կանգառասրահներ տեղադրվելու՞ են, թե ոչ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Կանգառասրահների վերաբերյալ այսօր արդեն ներկայացվել է իրականացվելիք ծրագրերը: Ինչ վերաբերում է կանգառ կատարելուն, ապա ուզում եմ նշել, որ կանգառի առկայությունը ոչ թե կանգառասրահի առկայությամբ է որոշվում, այլ լինում են նաև համապատասխան ցուցանակներ, որ դեռ չենք կահավորել համապատասխան կանգառասրահով, բայց դրանք համարվում են կանգառ:

Ձեր նշած դեպքերի վերաբերյալ քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությունը և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն կիրականացնեն ուսումնասիրություն և կներկայացվի տեղեկատվություն:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գևորգ Ստեփանյան, խնդրեմ:

Գևորգ Ստեփանյան

-Ինձ են դիմել Շենգավիթ վարչական շրջանի Լազոյի փողոցի հ.6 հասցեի բնակիչները՝ բողոքով, որ բակի միակ խաղահրապարակն ուզում են քանդել: Ցանկանում են կապ հաստատել Ձեզ հետ, պարոն Ավինյան, սակայն չի ստացվում: Ոստիկանությունը ժամկետ է սահմանել մինչև 20.11.2024թ. ժ.10.00, այնուհետև սկսելու են քանդման աշխատանքները: Այստեղ միայն խաղահրապարակի խնդիրը չէ: 20 մետր հեռավորության վրա վթարային շենքեր են և եթե այդ խաղահրապարակի տեղում կառուցվի 18 հարկանի բազմաբնակարան շենք, բոլոր կողմերից այդ մարդիկ արևից զրկվելու են: Մարդիկ անորոշության մեջ են և ուզում են Ձեզ հետ հանդիպել:

Տիգրան Ավինյան

-Կհանձնարարվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Շավարշ Գրիգորյանին կազմակերպել հանդիպում բնակիչների և կառուցապատողի մասնակցությամբ:

Ուզում եմ նաև տեղեկացնել բնակիչներին, որ տվյալ հատվածն ունի սեփականատեր և այդ հատվածի համար դեռևս 2020թ. տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, շինարարություն իրականացնելու համար թույլտվություն տրված չէ: Սակայն այդ տարածքում առկա է համայնքային հողատարածք, որի վրա անպայման կառուցվելու է նոր խաղահրապարակ: Ուզում եմ վստահեցնել, որ մինչև բակային հատվածի, խաղահրապարակի և այլ հարցերը չլուծվեն՝ չենք անցնի հաջորդ փուլին:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Իոսիֆ Կուբատյան, խնդրեմ:

Իոսիֆ Կուբատյան

-Շնորհակալություն, հարցս ունի համակարգային բնույթ. Կիևյան փողոցի հ.4 շենքի բակը մասնակի բարեկարգվել է, այնտեղ տարիներ առաջ կար ՖԻՖԱ-ի ստանդարտարտներով կառուցված խաղադաշտ, որի հատակը նույնպես անբարեկարգ է:

Կխնդրեի այդ տարածքն էլ վերանորոգվեր: Նույն բակում տեղադրված են խաղասարքեր, որոնք արդեն անպիտան են:

Պարոն Ավինյան, ես կարծում եմ, որ քաղաքի շատ բակերում տեղադրված այս խաղասարքերի տեխնիկական բնութագիրը պետք է փոխվի, որովհետև դրանք շատ շուտ անպիտան են դառնում: Օրինակ՝ Մերգելյանի այգում տեղադրված խաղասարքերն ավելի լավ են, կարծում եմ մնացած խաղասարքերը նույնպես այդ մոդելի նման պետք է լինեն:

Անդրադառնալով Մերգելյանի այգու տարածքին՝ ցանկանում եմ նշել, որ դիմացի հրապարակը, որը կարող է շատերը չգիտեն, կրում է Միեր Մկրտչյանի անունը, տարիներ առաջ այդտեղ ավտոկայանատեղի էր, այժմ ցանկապատվել է, որ ավտոմեքենաներ չկայանեն: Այս մասով ես կառաջարկեի հրապարակին տալ ինչ-որ ճարտարապետական լուծում, որը կունենար հրապարակի տեսք և ավելի համահունչ կլիներ նոր վերանորոգված Մերգելյանի այգու հետ:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Կուբատյան: Կիևյան փողոցի հ. 4 հասցեի խաղահրապարակի բարեկարգման և խաղասարքերի հետ կապված խնդիրները ընդունվեցին ի գիտություն: Ընդհանուր առմամբ Ձեր կողմից բարձրաձայնած հարցը ճշմարտություն է: Պետք է նշեմ, որ Մերգելյանի այգում տեղադրված և Ձեր կողմից մատնանշված խաղասարքերի միջև կա էական գնային տարբերություն: Ես համաձայն եմ, որ մենք աստիճանաբար պետք է բարձրացնենք որակի ստանդարտը: Այս մասով, պարոն Փամբուխչյան, պետք է խնդրեմ, խաղասարքերի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ քննարկում իրականացնենք, որովհետև հիմնականում սա կատարվում է վարչական շրջանների բարեկարգման ծրագրերով:

Ինչ վերաբերում է Կիևյան փողոցի հ.4 հասցեի խաղահրապարակի բարեկարգման հարցին, պարոն Վարոսյան ակնկալում եմ, որ այն ընդգրկվի համապատասխան ծրագրում:

Անդրադառնալով Մերգելյանի այգու դիմացի հրապարակի հարցին, նշեմ, որ Մերգելյանի այգու բարկարգման երկրորդ փուլով Ձեր կողմից մատնանշված հատվածը հրապարակի տեսք է ստանալու: Այդտեղ ունենալու ենք նախագծի շարունակություն և այդ եռանկյունի հատվածի հետ կապված քննարկվում է 2 տարբերակ՝ առանց ստորգետնյա ավտոկայանատեղիի և ավտոկայանատեղիի առկայությամբ՝ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի առաջարկով:

Այո՛, այս փուլում այդ տարածքում նախատեսվում է հրապարակ և նույնիսկ կան որոշակի նախագծային լուծումներ:

Իոսիֆ Կուբատյան

-Պարոն Ավինյան, հեծանվորդներից մեկն ինձ տեղեկացրել է, որ հեծանիվով մետրոյից օգտվելիս 2 տոմս է պահանջվում: Ցանկանում եմ տեղեկանալ՝ այս դեպքում հեծանիվով քաղաքացին ինչպե՞ս պետք է 2 տոմս գնի միասնական տոմսային համակարգի

պարագայում և ընդհանրապես, բացի մետրոյից, քաղաքացիները հեծանիվով ավտոբուս կարո՞ղ են մտնել:

Հաջորդ հարցս Նոր տարվա ծախսերի համար նախատեսված մրցույթի վերաբերյալ է: Ցանկանում եմ իմանալ, թե ինչպես ստացվեց, որ այդ մրցույթի հանձնաժողովի կազմում ավագանու 2 խմբակցությունների ներկայացուցիչները ներգրավված չեն եղել և ընդհանրապես, եթե այդ մրցույթի մասով կան պարզաբանումներ, խնդրում եմ ներկայացնել:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը, խնդրեմ:

Սուրեն Գրիգորյան

-Շնորհակալություն պարոն Կուբատյան: Ինչ վերաբերում է միասնական տոմսային համակարգի շրջանակներում Ձեր կողմից բարձրաձայնած խնդրին, անկեղծ ասած այս պահի դրությամբ այդ հարցի վերաբերյալ պատասխան չունեմ: Մեր հիմնական աշխատանքները, մինչև այս պահը, հիմնականում ուղղված են եղել մարդկանց տեղափոխության հարցերին, բայց Ձեր կողմից բարձրաձայնած հարցը լեգիտիմ է և այն անպայման կուսումասիրենք:

Կարծում եմ ինչպես այլ դեպքերում, այս դեպքում ևս լուծում կգտնվի, ինչպես տոմսային համակարգի ներդրումը միջազգային լավագույն փորձի տրամաբանությամբ ենք ուղղորդվել: Վստահ եմ Երևանն առաջին քաղաքը չէ, որ այդ հարցն առաջացել է և ինչ-որ լուծում այդ հարցին գտնվել է:

Անդրադառնալով ամանորյա միջոցառումներին՝ պետք է նշեմ, որ վաղն այս հարցի հետ կապված հրավիրվել է մամլո ասուլիս, որի շրջանակներում շատ հարցերին պատասխանելու հնարավորություն է լինելու:

Հանձնաժողովի կազմի մասով նշեմ, որ բոլոր խմբակցություններից կամ առհասարակ ավագանու անդամներ հրավիրելու որևիցե ֆորմալ պարտավորություն չկա: Նշեմ, որ միայն մեկ խմբակցությունից է, որ ավագանու անդամ չի հրավիրվել, առնվազն չորս խմբակցություններից ներկայացուցիչներ եղել են, ովքեր կարծել են, որ կարող են քաղաքական դիվիդենտ հավաքելու ցանկությունը դնեն մի կողմ և մասնակցեն քննարկման գործընթացին:

Ավելի ընդլայնված անդրադառնալով հարցին ցանկանում եմ նշել, որ մենք մի կողմից բողոքում ենք, որ գնումների գործընթացում ամենամատչելի գինը սահմանած մասնակցի հաղթելը քաղաքի համար հաճախ առաջացնում է խնդիրներ, ինչպես օրինակ՝ Դուք քիչ առաջ նշեցիք բակերում տեղադրված անորակ խաղասարքերի մասին: Որպես կանոն, եթե սահմանվում է որոշակի պահանջ, որն ուղղված է որակ ապահովելուն, առաջանում է մեկ այլ բողոք: Այս դեպքում միշտ գտնվում են մասնակիցներ, ովքեր բողոքում են, որ իրենց մասնակցությունը մրցույթին սահմանափակվել է և այստեղ պետք է ընտրենք՝ մեր համար

առաջնային է, ինչ-որ ապրանքի որակը՝ թեկուզ այդ քննադատությամբ, թե ընտրենք չքննադատվելը, բայց քաղաքը ստանա անորակ ծառայություն կամ ապրանք:

Ավելի հակիրճ ներկայացնելով Երևան քաղաքում իրականցվող ամանորյա ծրագրերի վերաբերյալ քննարկումը, նշվել է, որ հաշվի առնելով ամանորյա բյուջեի չափը, այն կազմակերպությունները, որոնք պետք է մասնակցեն մրցույթին, անհրաժեշտ է ունենան նախկինում մշակութային միջոցառումների կազմակերպման փորձ: Երկրորդ փուլում դրվել է պահանջ, որ այնպիսի ապրանք գնեք, որ մեկ տարի չօգտագործենք:

Ես ուզում եմ տեղեկացնել, որ 2022-2023թթ. ամանորյա լուսավորության ծրագրի համար ձեռք բերված գույքն արդեն երրորդ տարին է, որ օգտագործվելու է: Այսինքն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից գնվել է երկարաժամկետ օգտագործվող գույք և ընդամենը պահանջ ենք դրել, որ պետք է նախկինում ձեռք բերված գույքն այս տարի օգտագործվի: Ըստ էության բովանդակային ոչ մի այլ սահմանափակում չի եղել: Այժմ, եթե որևէ մեկը կասի անտրամաբանական էր, այսպիսի մեծ միջոցառում կազմակերպողին ներկայացնել պահանջ՝ նախկինում նման միջոցառումներ կազմակերպելու փորձ ունենալու համար, թող ասի, որ անտրամաբանական է: Եթե կլինի մարդ, ով կասի սխալ ենք արել, որ ասել ենք նորից այն գույքը, որ հնարավոր է օգտագործել պետք է օգտագործվի, ոչ թե ձեռք բերվի նորը, ինձ համար առնվազն տարօրինակ է: Ես ակնկալում եմ, որ ասվի կոնկրետ մենք ինչ պահանջ ենք դրել, որ չպետք է դնեինք և որը չի բխել Երևանի շահերից:

Շնորհակալ եմ հարցի համար, որ առիթ եղավ ներկայացնելու պարզաբանումներ, ավելի մանրամասն կներկայացնեմ վաղը նախատեսվող մամլո ասուլիսին:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Քոչարյան, խնդրեմ:

Արմեն Քոչարյան

-Առաջին հարցը վերաբերում է Վարդաշենի 6-րդ փողոցի 4-րդ կարգի վթարային շենքին: Ես այցելել եմ բնակարաններ, տեսել եմ, թե ինչպես է խրոցներից ջուրը հոսում: Այժմ ասում եք, որ գումար չկա: Եթե չկար գումար, ինչու՞ էիք 1.5 տարի առաջ մարդկանց խոստանում, որ հույսով սպասեն իրենց վերաբնակեցմանը: Եթե գումար չկար, ապա 2024թ. բյուջեում նախատեսեիք, կամ գումար նախատեսեք, հետո խոստումներ տվեք:

Տիգրան Ավինյան

-Վարդաշենի վթարային շենքերում մենք էլ ենք եղել: Այդ մարդկանց բնակարանների վիճակը տեսնելուց հետո խոստացել եմ, որ անպայման այդ հարցով զբաղվելու եմ: Սակայն ես այնտեղ բոլորին տեղեկացրել եմ, որ այդ հարցը միայն քաղաքապետարանի հնարավորությունների սահմաններում լուծվող հարց չէ: Պետք է աշխատենք ՀՀ կառավարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ և այդ գործընթացը տևելու է որոշակի ժամանակ: Խոստացել ենք, որ հետևողականորեն շարունակելու ենք աշխատել, որպեսզի հարցը լուծվի:

Այն, ինչ մեր հնարավորության սահմաններում է մենք անում ենք: Օրինակ՝ Արցախի փողոցի նրբանցքի վթարային շենքերի հարցերը՝ 60 բնակարանի հարց, Երևանի քաղաքապետարանը լուծել է եղած բնակարանային ֆոնդից: Երևանի քաղաքապետարանն իր ուժերի ներածին չափով լուծում է այս հարցերը: Իրականացվում է նաև ներդրումային ծրագիր: Օրինակ՝ Արզումանյան փողոցի հ.10 և հ.17 հասցեներում 4-րդ կարգի վթարային շենքեր են և դրանց վերաբերյալ առկա են դատական գործեր, որով տվյալ շենքերի որոշ բնակիչներ վիճարկում են Երևանի քաղաքապետարանի առաջարկը: Մինչ օրս թվով 76 անշարժ գույքից 59 գույքի մասով պայմանագրերի կարգավիճակը հետևյալն է՝ Արզումանյան փողոցի հ.10 շենքից 30 գույքի, 1 ավտոտնակի վերաբերյալ կնքվել է պայմանագիր, 8 գույքի վերաբերյալ՝ չի կնքվել: Արզումանյան փողոցի հ.17 շենքի 29 գույքի և 1 ավտոտնակի վերաբերյալ կնքվել է պայմանագիր, 9 գույքի և 1 ավտոտնակի վերաբերյալ՝ չի կնքվել: Ուզում եմ հասկանաք, թե ինչերի ենք բախվում այս գործընթացների ընթացքում: Մենք գիտակցելով մտել ենք այս խնդիրներով լի ոլորտ, որովհետև հասկացել ենք, որ մարդկանց անվտանգությունը մեզ համար առաջնահերթություն է:

Արմեն Քոչարյան

-Երկրորդ հարցը վերաբերում է հեղեղատարների անորակ կափարիչներին: Հայտարարում եք, որ հեղեղատարներն եք վերանորոգում, ջրահեռացումներն եք կազմակերպում, իսկ դրանց նկատմամբ հետևողական ո՞վ պետք է լինի:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

Արսեն Կարոյան

-Հեղեղատար համակարգերը և դրանց վրայի ցանցը մաշվելու, հնանալու հատկություն ունեն: Թեև դրանք ամբողջությամբ սպասարկվում են «Վեոլիա ջուր» ընկերության կողմից, բայց պարբերաբար լինում են վնասված ցանցեր, կոտրված, որոշ հասցեներում նաև ցանցերի գողության դեպքեր և մենք ահազանգ ունենալուն պես տեղեկացնում ենք «Վեոլիա ջուր» ընկերությանը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Կարոյան, անհրաժեշտ է ճշտել «Վեոլիա ջուր» ընկերության հետ, թե ինչպիսի ցանցեր են գնում, որ այդքան շուտ կոտրվում են:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հակոբյան, խնդրեմ:

Սամվել Հակոբյան

-Առաջին հարցը վերաբերում է քաղաքային իշխանության և ոստիկանության ոչ արդյունավետ համագործակցությանը:

Վստահ եմ բոլորդ տեսել եք, որ քաղաքում՝ հատկապես Կենտրոնում, կան շատ վայրեր, որտեղ մայթի եզրագիծը կարմիր գծանշում ունի մինչև խաչմերուկ, մյուս կողմն էլ

գծերը բաժանող հոծ գիծ է: Այսինքն՝ փաստացի այնպիսի իրավիճակ է ստեղծված, որ քաղաքացին մեքենա վարելիս ստիպված է միշտ խախտել օրենքը, որպեսզի վերադասավորվի վերջին գիծ և թեքվի դեպի աջ: Որպեսզի երթևեկությունը կարգավորվի կամ կարմիր գծանշումը կանգառից ավելի հեռացրեք, կամ հոծ գիծը վերացրեք, որ այսպիսի անիմաստ վիճակ չստեղծվի: Այս հարցը քննարկվե՞լ է, թե ոչ:

Երկրորդ հարցը հնչեցնեմ. ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում, որպեսզի արդյունավետ կերպով երթևեկությունը թեթևանա ու խցանումները պակասեն: Կրկին Կենտրոն վարչական շրջանի բազում վայրերում, մեկ կամ երկու մեքենայի ապօրինի կայանման պատճառով, առաջանում է խցանում և ես չեմ նկատել, որ տվյալ մեքենաների նկատմամբ օպերատիվ որևէ գործողություն կատարվի ու դրա արդյունքում հարցը լուծվի:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցի վերաբերյալ տեղեկացնեմ, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» օրենքի նախագծով կարծում եմ ամբողջապես Ձեր բարձրաձայնած խնդիրը կլուծվի, որովհետև Երևանի քաղաքապետարանն օրենքի նախագծով առաջարկում է տվյալ ծառայությունը նույնիսկ մասնավորին արտապատվիրակելու հնարավորություն տալ: Մասնավոր ընկերությունները, որոշակի գործընթաց անցնելուց հետո, հնարավորություն են ունենալու որոշակի պայմաններով, իրենց քարշակներով, այդ աշխատանքներն իրականացնել: Այսինքն՝ այս ռեսուրսի հնարավորություններն ընդլայնելու ենք: Կարծում եմ դրանով նաև կարողանալու ենք ակտիվորեն պայքարել նմանատիպ իրավախախտումների դեմ:

Ասեմ ավելին. վերոնշյալ օրենքի նախագծով կա ևս մի դրույթ, որ Երևանի քաղաքապետարանն իր տեխնիկական միջոցներով կամ իր անձնակազմի միջոցով արձանագրված իրավախախտումները նույնպես հնարավորություն է ունենալու ուղարկել ՀՀ ՆԳՆ գործընկերներին, որպեսզի իրենց մոտ այդ արձանագրությունները ստանան համապատասխան ընթացք:

Կարծում եմ այս երկու գործիքների կիրառմամբ Ձեր բարձրաձայնած երկրորդ հարցի լուծումն արդյունավետ կստանանք:

Առաջին հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալ Հայկ Էվոյանը:

Հայկ Էվոյան

-Ճանապարհային երթևեկության կանոններով սահմանափակումը հետևյալն է. մեքենաների կանգառը, կայանումը պետք է թույլատրվի հոծ գծից 3մ հեռավորության վրա: Այս պահանջի խախտումով կարմիր գծանշում և հոծ գիծ չկա արված, սակայն ևս մեկ անգամ կուսումնասիրենք և խնդիրների առկայության դեպքում կվերացնենք:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հակոբյան, այն փողոցները, որտեղ նկատել եք թերություններ, ցանկը ներկայացրեք տրանսպորտի վարչություն՝ առանձին-առանձին ուսումնասիրելու և թերությունները վերացնելու նպատակով:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Հարցս վերաբերում է Նուբարաշենի 13-րդ փողոցին, որի անվանակոչությունը բնակիչների համար եղել է անակնկալ: Մարդիկ անձնագրերը փոխելիս են նկատել, որ փողոցի անունն այլ է: Այս փողոցի անվանումը փոխվել ու դարձել է Նոր Զմյուռնիայի փողոց՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի առաջարկությամբ: Բնակիչները բողոքում են այդ անվանման դեմ, քանի որ ոչ մի զմյուռնիացի այնտեղ չի բնակվում: Խրթին է իրենց համար և շատ մեծ անհարմարություններ է առաջացնում փաստաթղթային հարցերի հետ կապված՝ գործարքներ կատարելիս, տաքսիներից օգտվելիս և այլն:

Բնակիչները ստորագրահավաք են կազմակերպել և բողոքում են՝ ցանկանալով վերականգնել հին անվանումը: Ուզում եմ հասկանալ ի վերջո չպե՞տք է վերջ տրվի առանց բնակիչների իրազեկման տեսական ինչ-որ անուն փողոցին հարմարեցնելու այս պրակտիկան: Ինչպե՞ս պետք է լուծվի այս հարցը:

Տիգրան Ավինյան

-Նախորդ նիստում ևս քննարկվեց փողոցների անվանափոխության հետ կապված հարց: Բոլոր այն դեպքերում, որտեղ միանշանակ չէ անվանափոխության հարցը և կա դիմում քաղաքացիների կողմից, այդ դիմումին համապատասխան՝ կարծում եմ կարող ենք դնել քվեարկության՝ «Ակտիվ քաղաքացի» հարթակում և հասկանալ ընդհանուր երևանցիների կարծիքն այդ հարցի վերաբերյալ և հետագա որոշումը կայացնել: Տիկին Մելիքյան, կարող եք նաև Դուք ավագանու որոշման նախաձեռնությամբ հանդես գալ:

Բոլոր դեպքերում, անվանակոչվում են այն փողոցները, որոնք թվային համարակալմամբ են: Եթե կա անվանափոխության խնդիր, օրինակ՝ եթե համաձայն չեն Նոր Զմյուռնիա անվանման հետ և այլ անվանում են ուզում, դա ուրիշ հարց է, բայց վերականգնել Նուբարաշենի 13-րդ փողոց անունը, դա ճիշտ չէ: Եթե կա առաջարկ ձևակերպեք, ներկայացրեք քննարկենք, բայց թվային համարակալմամբ չվերանվանենք:

Տեղեկացնեմ նաև, որ փողոցների անվանակոչության որոշումները, ընդունվելուց հետո անմիջապես փոխանցվում են համապատասխան գործընկերներին՝ առաջին հերթին Կադաստրի կոմիտեին, և որոշ ժամանակ անց օնլայն բոլոր հավելվածներում, քարտեզներում (այդ թվում՝ տաքսիների), արտացոլվում են փողոցների նոր անվանումները:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Դիանա Քերոբյան, խնդրեմ:

Դիանա Քերոբյան

-Առաջին հարցը հնչեցնեմ. մենք հաճախ ականատես ենք լինում շինհրապարակների կահավորման նորմերի խախտման (փոշու սարքեր, պաշտպանիչ սարքեր), որի համար տուգանվում են: Բայց մեկ այլ հարց է տարածքի սահմանազատումը: Հաճախ ականատես ենք լինում, որ չափից շատ զավթում և համայնքային հողն օգտագործում են որպես շինհրապարակ: Մայթեր են զավթում, նույնիսկ դուրս են գալիս երթևեկելի գոտի:

Որքանո՞վ է դա վերահսկվում քաղաքապետարանի կողմից: Ունեմ նաև առաջարկ՝ եթե անհնարին է շինարարությունը կազմակերպել իրենց սեփական հատվածում և ուզում են համայնքային հողն օգտագործել, համայնքի կողմից թույլատրվի դա՝ վարձավճարի դիմաց:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Տիկին Քերոբյան, այժմ էլ մայթերի և երթևեկելի մասի փակումն իրականացվում է բացառապես քաղաքապետարանի կողմից տրված թույլտվության հիման վրա: Ցանկացած հատված, որը փակվել է առանց քաղաքապետարանի թույլտվության, դա հողամասի զավթում է, ոչ թե շինհրապարակի ոչ պատշաճ կահավորում, որի տուգանքները հասնում են մի քանի միլիոնի:

Ինչ վերաբերում է քաղաքապետարանի կողմից թույլտվություն տալուն, ապա թույլտվություն տրամադրող քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումները քննարկում են հարցը տրանսպորտի վարչության և վարչական շրջանների ղեկավարների հետ, որպեսզի հնարավորինս նվազագույն անհարմարություն պատճառվի:

Պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկացնեմ, որ շինհրապարակների կահավորման պահանջները սահմանված են Երևանի ավագանու որոշմամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված է պահանջների խախտումների համար տուգանքը, որի նկատմամբ շատ ակտիվ հսկողություն է իրականացվում վարչական շրջանների ղեկավարների կողմից ու շատ մեծ քանակով տուգանք են նշանակում:

Համաձայն ենք, որ տուգանքի գումարն այնքան փոքր է, որ կանխարգելիչ ֆունկցիան չի իրականացնում: Նախատեսել ենք, որ այդ տուգանքի գումարները պետք է բարձրացվեն՝ շեշտակի և տարանջատվեն՝ ըստ իրավախախտումների տեսակի: Ավելի մեծ վտանգավորություն ունեցող, օրինակ՝ փոշու արտանետման տուգանքն ավելի բարձր կլինի, քան ավելի նվազ վտանգավորություն ունեցողը, օրինակ՝ ցուցանակը չփակցնելը:

Ինչ վերաբերում է թույլտվությունների տրամադրման կարգին՝ նախագծով հնարավոր ամեն փորձ կարվի վարչարարությունը նվազեցնելու համար:

Առանձին վարձակալության պայմանագրի կնքում կրկին չենք նախատեսել: Նմանատիպ դեպքերում քաղաքապետի կողմից թույլտվություն տրամադրելիս նախատեսել ենք, որ, եթե նախագիծն այդ մակերեսով է հաստատվելու, ապա այդ տարածքն համարվելու է իրեն տրամադրված, իսկ շինթույլտվության համար կարող ենք տուրքերի մեջ փոփոխություն կատարել՝ տուրքերն ավելացնենք այն դեպքում, երբ կա ավել օգտագործված տարածք:

Տիգրան Ավինյան

-Տիկին Քերոբյան, այժմ կառուցապատողները գերշահագրգռված են, որպեսզի տրված շինթույլտվությունների ժամկետներում հասցնեն ավարտել շինարարությունը, որովհետև, ինչպես ասացի, այս տարի շինարարության ոլորտից 18 մլրդ դրամ տուրք ենք հավաքագրել: Սակայն չասացի, որ դրանից ավելի մեծ ծավալի տուգանքների հավաքագրման հնարավորություն կար ժամկետների խախտումների և երկարաձգումների դեպքում: Այսինքն, օրինակ՝ ժամկետի մեկ տարով երկարաձգման տուրքը շինթույլտվության տուրքի չափից ավելին է: Այնքան մեծ թվերի մասին էր խոսքը, որ արտոնություններ սահմանեցինք՝ 90 տոկոսի չափով: Բայց, այնուամենայնիվ, տարեց տարի այդ արտոնությունների չափն էլ պետք է նվազեցնել և կարևորը, որ այդտեղ որոշակի կանխատեսելիություն ունենան կառուցապատողները:

Դիանա Քերոբյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. Բադալ Մուրադյան փողոցի հ.3 հասցեի «Տիտան» սուպերմարկետի դիմացի մայթային հատվածը շուրջ 10 տարի է ապօրինի օգտագործվում է որպես կայանատեղի: Այնտեղ խնդիր էին բարձրաձայնել, որ հետիոտներին անվտանգ չէ անցնելը, քանի որ եղել էին դեպքեր՝ սայլակ էին շրջել մեքենայով, մարդ էին վրաերթի ենթարկել, ով կոտրել էր թևը:

Իմ առաջարկով այնտեղ կանգնակներ տեղադրվեցին: Որոշ ժամանակ անց՝ մոտ 6 ամիս հետո, սկսեցին կոտրել այդ կանգնակները, հետո իբրև վերականգնեցին, բետոնե սալիկները, քանդեցին ու քանդված թողեցին և այժմ անբարեկարգ վիճակում է: Ուզում եմ իմանալ ի՞նչ է նախաձեռնվել, ի՞նչ համաձայնության են եկել տնտեսվարողի հետ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Տիգրան Տեր-Մարգարյանը:

Տիգրան Տեր-Մարգարյան

-10 և ավել տարի առաջ նշված վայրում եղել է պուրակ, այնուհետև զավթվել է և դարձել ավտոկայանատեղի: Հաջորդ տարվա համար ունենք ծրագիր՝ այդտեղ պուրակը վերականգնելու, բայց քանի որ այդտեղ շատ են մեքենաները, որոշվեց բակային հատվածում՝ երկու մուտքերի մոտ, յուրաքանչյուր կողմից թողնել 10-11 մեքենայի համար նախատեսված կայանատեղի, որը կծառայի բնակիչներին և մեջտեղի հատվածում վերականգնել պուրակը:

Տիգրան Ավինյան

- Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան:

Վահան Ավագյան

-Երևան քաղաքում դեռևս 1990-ական թվականներից մինչև այժմ կան կառույցներ, որոնք չեն շահագործվում: Դրանցից է՝ Երևանի սրտում գտնվող «Детский мир» կամ «ЦУМ» շենքը, որը պատկանում է Արա Աբրահամյանին:

-Ի՞նչ պայմաններով է վաճառվել, ի՞նչ նպատակներով և ի՞նչ ժամկետներում այդ շինությունը պետք է ծառայեր հանրությանը:

Այդ տարածքի շահագործման դեպքում տարիների ընթացքում բազմաթիվ հարկեր և տուրքեր կմուծվեր բյուջե:

Առաջարկում եմ, եթե ներկա պահին եթե այս հարցին չկա պատասխան, վերանայել պայմանագիրը, գտնել լծակներ և իրավական հիմքեր տվյալ տարածքը և նմանատիպ այլ շենքերը համայնքին վերադարձնելու համար:

Տիգրան Ավինյան

-Ամենայն հավանականությամբ այս շենքը ժամանակին չի հանդիսացել համայնքային գույք և օտարվել է որպես պետական գույք:

Ուզում եմ տեղեկացնել, որ այս շենքը պատմամշակութային հուշարձան է:

Հարցի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կներկայացնի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Պարոն քաղաքապետ, թույլ տվեք ավելացնել, որ դատախազության կողմից նախաձեռնվել էր քրեական վարույթ, որի շրջանակում շենքի վաճառքի իրավաչափությունն ուսումնասիրվել էր և դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից համապատասխան հայցադիմում է ներկայացվել սեփական իրավունքը դադարեցնելու պահանջով: Քանի որ գույքը դեռևս օտարել է պետությունը, ոչ թե Երևան համայնքը, ապա այդ գործով պատասխանող հանդիսանում է պետությունը և ես գործի մանրամասներին չեմ տիրապետում:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր նախագծով, որի վերաբերյալ քիչ առաջ խոսեցինք, նախատեսված է պատմամշակութային հուշարձան հանդիսացող շենք, շինությունները, եթե օրենսդրությամբ սահմանված պահանջներին և նպատակային նշանակությամբ չեն օգտագործվում և չեն պահպանվում, նույնպես վարչական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանալու և կրկին շատ մեծ պատասխանատվություն է նախատեսված այդ իրավախախտման համար:

Վերոնշյալից ելնելով, կարծում եմ որևէ մեկի համար շահավետ չի լինի նմանատիպ շենքերը չշահագործելը և չպահպանելը:

Տիգրան Ավինյան

-Խոսքը վերաբերում է ոչ միայն շենքերի պահպանմանը, այլ նաև օրենքին համապատասխան շահագործմանը:

Հետևապես, Երևանի քաղաքապետարանը հնարավորություն է ունենալու բոլոր այն դեպքերում, երբ պատմամշակութային հուշարձանն օրենքին համապատասխան չի պահպանվում կամ շահագործվում, կիրառել էական մեծ տուգանքներ:

Վահան Ավագյան

-Երկրորդ հարցը վերաբերում է «Վեոլիա ջուր» ընկերությանը:

Գիտեմ, որ հորդորներից հետո Դուք սկսել եք քննարկումներ կազմակերպել և վերանայել «Վեոլիա ջուր» ընկերության և Երևան համայնքի միջև կնքված պայմանագիրը:

Խնդրում եմ տեղեկացնել, ի՞նչ կետեր եք վերանայում, ի՞նչ փուլում են գտնվում բանակցությունները:

Գուցե ժամանակն է «Վեոլիա ջուր» ընկերության հետ խզել վարձակալության պայմանագիրը և հայտարարել նոր մրցույթ, գտնել ավելի բարեխիղճ գործընկեր կամ ստեղծել մեր՝ սեփական ՀՈԱԿ-ը:

Խնդիրների դեպքում բողոքներն ուղղվում են մեզ: Գույքը պատկանում է համայնքին, վթարների վերացման աշխատանքները կատարվում են անընդունելի երկար ժամանակում, ինչպես նաև առաջանում է մշտական դիսկոմունիկացիա, որի հետևանքով նորոգված փողոցները քանդվում են ջրի վթարների վերացման համար:

Այս ամենը բյուջեի անիմաստ վատնում է: Միգուցե ՀՈԱԿ ստեղծելու դեպքում, այդ եկամուտների տնտեսման արդյունքում հանրային տրանսպորտը դառնա անվճար:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ավագյան, ցանկանում եմ մի քանի կարևոր արձանագրում անել.

Ամբողջ գույքը՝ խողովակաշարերը, անձրևատարները, կոյուղատարները, ջրագծերը չեն հանդիսանում Երևանի քաղաքապետարանի սեփականությունը:

Երևանի քաղաքապետարանն որևէ կոյուղատար համակարգի նախագիծ կամ ծրագիր իրականացնելիս, որն արվում է վերջին 1-2 տարվա ընթացքում, գույքը պետք է նվիրաբերի ՀՀ կառավարությանը:

«Վեոլիա ջուր» ընկերության հետ պայմանագիրը բանակցվել և կնքվել է ՀՀ կառավարության կողմից: Երևանի քաղաքապետարանն այդ ընդհանուր բանակցությունների կողմ է հանդիսանում: Այս պահի դրությամբ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակը զբաղվում է այս գործընթացով և իրականացնում է բանակցություններ «Վեոլիա ջուր» ընկերության հետ:

Խնդիրը բազմակողմանի է, և՛ ներդրումների, և՛ սպասարկման հարց կա: Հարցեր կան, որոնց անդրադարձ չի եղել, օրինակ՝ կոյուղիների, հեղեղատարների, անձրևատարների մասով:

Հավելյալ տեղեկատվություն կներկայացնի Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Պարոն քաղաքապետ, պայմանագիրը կնքվել է 2016-2031թթ. համար:

Ներկայումս ՀՀ կառավարությունում ընթանում են քննարկումներ, քանի որ պայմանագիրը վերանայելու կարիք կա: Մոտակա երեք տարվա մասով քննարկվում է պայմանագրի վերակնքումը: Այսինքն, 2031թ. պայմանագրից բացի մոտակա երեք տավա համար կկնքվի նոր պայմանագիր՝ նոր ցուցանիշերով և «Վեոլիա ջուր» ընկերության կողմից նոր պարտադիր կատարման ներդրումներով: Երևանը՝ որպես համայնք, ներգարվված է այդ քննարկումներում: Բոլոր խնդիրները, որոնք այսօր բարձրաձայնվեց, ՀՀ կառավարությանը ներկայացվել է և միասին լուծում կստանանք:

Տիգրան Ավինյան

- Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյան:

Արամ Թորոսյան

Հարցը վերաբերում է Տորք Անգեղի այգուն.

Այս պահին այգու կարգավիճակը թույլ է տալիս կատարել որոշակի շինարարական աշխատանքներ:

Գործակարգավարական խորհրդակցության ընթացքում Դուք նշեցիք, որ այգում նախատեսվում է շինարարական աշխատանքներ, որն այս պահին կասեցվել է:

Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում, որպեսզի այդ այգում և Երևան քաղաքի մյուս այգիներում բացառվեն շինարարական աշխատանքները:

Տիգրան Ավինյան

- Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

- Պարոն Թորոսյան, Տորք Անգեղի այգու հարցը քննարկելիս, անձամբ նայել եմ գլխավոր հատակագիծը: Գլխավոր հատակագծում նշված է որպես ընդհանուր օգտագործման տարածք: Հողային օրենսգրքի կարգավորումներով սահմանված է, որ այգիները հանդիսանում են բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման տարածքներ (այգիները, պուրակները, ճանապարհները, մայթերը և այլ ընդհանուր օգտագործման տարածքները):

Համայնքի կողմից եթե մի հատված դիտարկվում է որպես այգի (թե՛ փաստացի գոյություն ունեցող, թե՛ համայնքը ցանկանում է այդտեղ այգի կառուցել) գլխավոր հատակագծում նշվում է ընդանուր օգտագործման տարածք: Որևէ պնդում, որ պետք է նշված լիներ այլ նպատակային նշանակության, չի բխում Հողային օրենսգրքից:

Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ մասին ծանոթացեք, հստակ նշված է.

Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումներում են գտնվում ընդհանուր օգտագործման հողամասերը, և փակագծերում նշված է այգի բառը: Այսինքն, գլխավոր հատակագծում, այգու պարագայում, որևէ այլ նշում հնարավոր չէ: Գուցե այդ նշումը տարբերվել է նախորդ գլխավոր հատակագծից, քանի որ նախորդ գլխավոր հատակագիծը ընդունվել է 2005 թվականին՝ այդ ժամանակ գործող օրենսդրությանը համապատասխան:

Ներկայումս գործող օրենսդրությամբ Տորք Անգեղի այգին համապատասխանեցված է Հողային օրենսգրքի կարգավորումներին և օտարման ենթակա չէ:

Մասնավոր շինարարական աշխատանքներ կարող է իրականացվել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ներառված հողամասերի վրա, բացառապես՝ կառուցապատման իրավունքի առկայության պարագայում:

Տիգրան Ավինյան

-Պարոն Թորոսյան, մասնավորապես, եթե տրվում է այգում թեթև կոնստրուկցիաներով սրճարան կառուցելու թույլտվություն, դա կառուցապատման իրավունք է, օրինակ՝ Մերգելյանի այգում:

Նախկինում իրավունքի գրանցման պրակտիկան այն էր, որ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, (օրինակ՝ Օղակաձև զբոսայգի, Մերգելյանի այգի) եղել է փաստացի ճարտարապետահատակագծային առաջադրանքով և շինթույլտվությամբ տրված նմանատիպ թույլտվություններ, որոնք հետագայում դարձել են սեփականության վկայականներ: Այսինքն եղել է իրավիճակ, երբ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով վարձակալած այգու հողի վրա առկա է սեփական որևէ շինություն: Այլևս նման պրակտիկա չկա: Բոլոր այն դեպքերում, եթե խոսքը վերաբերում է ընդհանուր օգտագործման տարածքներին, ապա Երևանի քաղաքապետարանը նման թույլտվություն երբևէ չի տալիս:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 3-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն